ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 142-Ա

ք. Երևան

«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի հոկտեմբերի 15-ին դիմումի հիման վրա հարուցված թիվ 9 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

2025 թվականի հոկտեմբերի 15-ին Հանձնաժողով է մուտքագրվել «Ավրորանյուզ» գլխավոր խմբագիր Դավիթ Ջալալյանի (այսուհետ՝ Դիմումատու) դիմումը «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից փաստացի հեռարձակում չիրականացնելու փաստի վերաբերյալ:

Դիմումատուն հոկտեմբերի 15-ի դիմումով հայտնել է, որ «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից Արարատի մարզում՝ Ջովաշեն-94.0 Մhg, Վեդի-94.7 Մhg և Արտաշատ-94.3 Մhg հաճախականություններով փաստացի հեռարձակում չի իրականացվել:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով դիմումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 2025 թվականի հոկտեմբերի 15-ին Ընկերության նկատմամբ հարուցել է թիվ 9 վարչական վարույթը:

Հանձնաժողովը վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում հաստատված է համարել այն փաստը, որ Հեռարձակողն ավելի քան 24 ժամ չի ապահովել լսողական հաղորդումների հեռարձակումը:

Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 132-Ա որոշմամբ, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ լիցենզիայի գործողությունը կասեցնելով 20 (քսան) օր ժամկետով:

2025 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 132-Ա որոշումն ուժի մեջ է մտել այն Հեռարձակողին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից, իսկ լիցենզիայի

գործողությունը կասեցված է համարվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 2025 թվականի նոյեմբերի 14-ից:

Հեռարձակողի լիցենզիայի կասեցման ժամկետը սահմանված է 14.11.2025 թվականից մինչև 04.12.2025 թվականը:

Սակայն Հեռարձակողը 2025 թվականի դեկտեմբերի 2-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում, որով խնդրել է դադարեցնել «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը տրամադրված ՀՀ Արարատի մարզում գ. Զովաշեն՝ 94.0 ՄՀց, ք. Վեդի՝ 94.7 ՄՀց և ք. Արտաշատ՝ 94.3 ՄՀց հաճախականությունների օգտագործման 29.08.2021թ. թիվ ՌՀ N 321 լիցենզիայի գործողությունը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, սույն գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում:

Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

2. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո կարգավորող պետական մարմնի նշած ժամկետում սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումները վերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը վերացնում է կասեցումը:

Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է.

3. Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտումը չի վերացվել.

Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը սահմանում է.

Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

5) այդ մասին դիմում է ներկայացվել.

«Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է.

«1. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել՝

7) լիցենզավորված անձի դիմումի համաձայն.»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ

Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 11-ի «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 132-Ա որոշմամբ Հեռարձակողի

նկատմամբ կիրառվել է Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված վարչական տույժը՝ լիցենզիայի գործողությունը կասեցնելով 20 (քսան) օր ժամկետով:

Հեռարձակողի լիցենզիայի կասեցման ժամկետը սահմանված է 14.11.2025 թվականից մինչև 04.12.2025 թվականը:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեռարձակողը 2025 թվականի դեկտեմբերի 2-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում Զովաշեն (94.0 ՄՀց), Վեդի (94.7 ՄՀց) և Արտաշատ (94.3 ՄՀց) հաճախականությունների օգտագործման համար 20.08.2021 թ. տրամադրված թիվ ՌՀ N 321 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ, Հանձնաժողովն արձանագրում է, որ քննարկվող վարչական վարույթի առարկան հանդիսանում է հենց այդ լիցենզիայի գործողության կասեցումը՝ որպես Հեռարձակողի նկատմամբ կիրառված վարչական տույժ: Լիցենզիայի գործողության դադարեցման վերաբերյալ Հեռարձակողի դիմումի ներկայացմամբ փաստացիորեն վերացել է այն իրավահարաբերությունը, որի շրջանակներում վարչական վարույթը հարուցվել էր: Այսպիսով, քանի որ բացակայում է վարչական իրավախախտման փաստի կամ կազմի առկայությունը, Հանձնաժողովը եզրակացնում է, որ 2025 թվականի նոյեմբերի 15-ին հարուցված թիվ 9 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ վարչական վարույթը ենթակա է կարճման, եթե բացակայում է վարչական իրավախախտման դեպքը կամ կազմը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝ մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, ինչպես նաև հիմք ընդունելով Հեռարձակողի 2025 թվականի դեկտեմբերի 02-ի դիմումը, Հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 04-ի «ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՌՀ N 321 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ

141-Ա որոշումը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով և 282-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ 15.10.2025թ. հարուցված թիվ 9 վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի կողմերին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 04
ք.Երևան